

Տեղեկատվություն

ՀՀ Արարատի մարզպետի, մարզպետի տեղակալների պաշտոնական այցելությունների, աշխատանքային այցերի և միջոցառումների մասնակցության վերաբերյալ:

2013 թվականի 9 ամիսների ընթացքում ՀՀ Արարատի մարզպետ Էդիկ Բարսեղյանը 1 պաշտոնական այցելություն է ունեցել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն:

Մարզպետը աշխատանքային այցով եղել է մարզի 63 համայնքներում, 32 ուսումնական, մշակութային և մարզական հաստատություններում, 12 առողջապահական հիմնարկներում, 20 վերամշակող և արտադրական կազմակերպություններում :

Կայքի նորություններ բաժնի հաղորդագրություններից կարելի է տեղեկանալ նաև մարզպետ Էդիկ Բարսեղյանի միջոցառումների մասնակցության վերաբերյալ տեղեկատվությանը :

Մարզում տեղի ունեցած այն միջոցառումներին, որին ներկա է եղել Արարատի մարզպետը , պարտադիր իր մասնակցությունն են ունեցել նաև տեղակալները կամ տեղակալներից մեկը, որի մասին հաղորդագրություններում առանձնահատուկ չի նշվում:

2013 թվականի 9 ամիսների ընթացքում ՀՀ Արարատի մարզպետի տեղակալ Սամվել Մինասյանը աշխատանքային այցով եղել է մարզի 52 համայնքներում, որից 33-ը` Արարատի մարզպետ Էդիկ Բարսեղյանի հետ միասին, 47 ուսումնական , մշակութային և մարզական հաստատություններում, 15 առողջապահական հիմնարկներում:

2013 թվականի 9 ամիսների ընթացքում ՀՀ Արարատի մարզպետի տեղակալ Կառլեն Հակոբյանը աշխատանքային այցով եղել է մարզի 48 համայնքներում, որից 23-ը` Արարատի մարզպետ Էդիկ Բարսեղյանի հետ միասին, 20 վերամշակող և արտադրական կազմակերպություններում:

2013 թվականի 9 ամիսների ընթացքում ՀՀ Արարատի մարզպետի տեղակալ Աշոտ Մուրադյանը աշխատանքային այցով եղել է մարզի 65 համայնքներում, որից 40-ը Արարատի մարզպետ Էդիկ Բարսեղյանի հետ միասին:

2013 թվականի 9 ամիսների ընթացքում մարզպետի տեղակալները պաշտոնական այցելություններ չեն ունեցել: